**Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք**

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի նիստի՝ կայացած 29.01.2016թ., թիվ 1 արձանագրությունից:

Նիստին գիտխորհրդի 40 անդամներից մասնակցում էին 32-ը, հարգելի պատճառով բացակայում էին 8 -ը:

ԼՍԵՑԻՆ 1.Ստորաբաժանումների ռազմավարական ծրագրերի և պլանների իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքների վերլուծություն:

Զեկ.՝ կրթության որակի ապահովման

կենտրոնի ղեկավար Մ.Շահվերդյան

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Զեկուցումը՝ ստորաբաժանումների ռազմավարական ծրագրերի և պլանների իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքների վերլուծության վերաբերյալ՝ ընդունել ի գիտություն:

***Հանձնարարել համալսարանի ստորաբաժանումների ղեկավարներին՝***

- Վերանայել, հստակեցնելով և կոնկրետացնելով ֆակուլտետների և ամբիոնների առաքելության և տեսլականի ձևակերպումները համալսարանի զարգացման հայեցակարգին համապատասխան:
- Ռազմավարական պլաններում նշված նպատակները և խնդիրները հստակեցնել ըստ առաքելության և գործունեության ոլորտների, տարանջատել իրարից, որոշել ակնկալվող արդյունքների գնահատման ցուցիչները, դարձնելով հստակ և չափելի, նշել, բաժանելով իրարից, ներքին և արտաքին սպառնալիքները:
- Ռազմավարական պլաններում ներկայացնել համալսարանի զարգացման հայեցակարգում ձևակերպված խնդիրները և գործառույթները ըստ գործունեության ուղղությունների:
- Քննարկել որոշ ամբիոնների կողմից թույլատրվող մասնագիտությունների համապատասխանությունը իրենց մասնագիտական ուղղվածությանը:
- Մշակել կատարողականի հստակ և չափելի ցուցիչներ ըստ գործունեության ռազմավարական ուղղությունների, որոնցով կգնահատվեն ռազմավարական խնդիրների լուծման ընթացքը և արդյունքները:

**Նիստի նախագահ Գ. Խաչատրյան**

**Իսկականի հետ ճիշտ է.**

**Գիտքարտուղար Ս. Բեժանյան**